ՀԿԴ/0082/11/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության
հակակոռուպցիոն դատարան,
նախագահող դատավոր Ս.Պետրոսյան

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան,
նախագահող դատավոր Ա.Մարտիրոսյան

2026 թվականի նոյեմբերի 17-ին քաղաք Երևանում

ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմը (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԻ
Ս.ՉԻՉՈՅԱՆԻ
Դ.ՎԵՔԻԼՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2025 թվականի հուլիսի 10-ի որոշման դեմ տուժող «**********» ՍՊ ընկերության լիազոր ներկայացուցիչ Էդ.Հակոբյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2023 թվականի դեկտեմբերի 13-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 277-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով նախաձեռնվել է թիվ ********* քրեական վարույթը:

1.2. 2023 թվականի դեկտեմբերի 25-ին «**********» ՍՊ ընկերությունը ճանաչվել է տուժող:

1.3. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնի ավագ քննիչ Լ.Պողոսյանի՝ 2025 թվականի հունվարի 17-ին որոշմամբ թիվ ******** քրեական վարույթը կարճվել է, իսկ 2025 թվականի հունվարի 27-ին այդ որոշումը հաստատվել է հսկող դատախազի կողմից:

1.4. Նախաքննության մարմնի վերոնշյալ որոշման դեմ տուժող «********** *****» ՍՊ ընկերության լիազոր ներկայացուցիչ Էդ.Հակոբյանի բողոքը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ Ս.Պողոսյանի՝ 2025 թվականի մարտի 21-ի որոշմամբ մերժվել է:

2. Նախաքննության մարմնի՝ թիվ ********** քրեական վարույթը կարճելու մասին 2025 թվականի հունվարի 17-ի որոշման դեմ տուժող «**********» ՍՊ ընկերության լիազոր ներկայացուցիչ Էդ.Հակոբյանի բողոքը ՀՀ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2025 թվականի մայիսի 26-ի որոշմամբ բավարարվել է, վարույթի հանրային մասնակիցը պարտավորեցվել է վերացնել քրեական վարույթը կարճելու մասին որոշումը և հանձնարարել շարունակել նախաքննությունը:

3. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Հ.Ասատրյանի հատուկ վերանայման բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանն իր՝ 2025 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի՝ 2025 թվականի մայիսի 26-ի որոշումը բեկանել է և տուժող «**********» ՍՊ ընկերության լիազոր ներկայացուցիչ Էդ.Հակոբյանի բողոքը՝ մերժել:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ տուժող «********** *****» ՍՊ ընկերության լիազոր ներկայացուցիչ Էդ.Հակոբյանը բերել է հատուկ վերանայման վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2025 թվականի հոկտեմբերի 2-ի որոշմամբ ընդունվել է վարույթ, և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

Հատուկ վերանայման վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

5. Բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել քրեադատավարական օրենքի էական խախտում, որի հետևանքով խաթարվել է արդարադատության բուն էությունը, մասնավորապես, Վերաքննիչ դատարանը, բեկանելով ստորադաս դատարանի որոշումը և մերժելով մինչդատական ակտի վերաբերյալ բողոքը, տուժողին զրկել է դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքներից:

Միևնույն ժամանակ, բողոքաբերը գտել է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

5.1. Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքաբերը փաստարկել է, որ վարույթն իրականացնող քննիչը նախաքննությունն ավարտելու մտադրության մասին տուժող ճանաչված ընկերությանը չի հայտնել, քրեական վարույթի նյութերը չի տրամադրել, ինչի արդյունքում խախտել է տուժողի իրավունքները: Փոխարենը նախաքննության ավարտի մասին ծանուցվել է տուժող չհանդիսացող ֆիզիկական անձ, ով ընկերության անունից չի ունեցել քրեական վարույթի նյութերին ծանոթանալու և անհրաժեշտ միջնորդություններ ներկայացնելու որևէ լիազորություն կամ իրավասություն, որը «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով վերապահված է ընկերության տնօրենին:

Բողոքաբերը նաև նշել է, որ Վերաքննիչ դատարանը տուժող ճանաչված «**********» ՍՊ ընկերությանը՝ որպես իրավաբանական անձ, նույնացրել

է դրա 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր հանդիսացող ֆիզիկական անձ Հ****** Ս********-ի հետ՝ անտեսելով այն հանգամանքը, որ վերջինս չի հանդիսացել քրեական վարույթով տուժող, ընկերությունն ունեցել է տնօրեն՝ Վ******* Ա**********-ը, ում հանձնված է եղել ընկերության գործադիր կառավարումը, ընկերության անունից դրա շահերի պաշտպանությունը, այդ թվում՝ քրեական վարույթով, ուստի ստորադաս դատարանը չէր կարող Հ.Ս********-ի ծանուցված լինելը բավարար դիտարկել:

5.2. Միևնույն ժամանակ, բողոքաբերը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարան ներկայացված բողոքում նշվել են տուժողի իրավունքների խախտման մի քանի հիմքեր, որոնցից Առաջին ատյանի դատարանն անդրադարձել է միայն նախաքննության ավարտի մասին տուժող ընկերության ծանուցված չլինելուն, որպիսի պայմաններում բեկանելով ստորադաս դատարանի դատական ակտը և դրանում կատարված պատճառաբանությունն անհիմն համարելով հանդերձ՝ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր դատական վարույթը փոխանցել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության՝ սահմանելով քննության նոր ծավալ՝ բողոքում նշված մյուս հիմքերն ու փաստարկները քննարկման առարկա դարձնելու մասին:

5.3. Բողոքաբերը միաժամանակ վիճարկել է նախաքննության մարմնի՝ վարույթը կարճելու մասին, ինչպես նաև հսկող դատախազի՝ բողոքը քննության առնելու մասին մինչդատական ակտերի իրավաչափությունը՝ անդրադառնալով նաև դրանցում կատարված պատճառաբանություններին:

Բողոքաբերը, ի թիվս այլ փաստարկների, նշել է, որ վարույթն իրականացնող մարմնին ներկայացրել է բանկի կողմից տրամադրված տասներեք վարկային պայմանագրերով քաղվածքները, որոնցով հաստատվում է, որ բանկի ղեկավարությունը և աշխատակիցներն ընկերության բանկային հաշիվներից առերևույթ հափշտակել են ավելի քան 2.395.731,28 դոլար գումար, սակայն նախաքննության մարմինը նշվածի կապակցությամբ պատշաճ քննություն չի իրականացրել և քրեական վարույթը կարճել է:

6. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 10-ի որոշումը և վարույթը փոխանցել ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ նոր քննության:

<u>Հատուկ վերանայման վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

7. 2023 թվականի նոյեմբերի 24-ին փաստաբան Էդ.Հակոբյանը ներկայացրել է ենթադրյալ հանցանքի մասին հաղորդում[1], որի կապակցությամբ 2023 թվականի դեկտեմբերի 13-ին նախաձեռնվել է թիվ ******** քրեական վարույթը[2]:

8. 2023 թվականի դեկտեմբերի 25-ին «**********» ՍՊ ընկերությունը ճանաչվել է տուժող[3]:

9. 2024 թվականի դեկտեմբերի 27-ին նախաքննության մարմնի կողմից կազմվել է արձանագրություն՝ նախաքննության ավարտի վերաբերյալ վկա Հ.Ս********-ին և փաստաբան Էդ.Հակոբյանին ծանուցելու մասին, որը նույն օրվա գրությամբ ուղարկվել է նշված անձանց[4]:

10. 2024 թվականի դեկտեմբերի 30-ին նախաքննության մարմնի կողմից կազմվել է քրեական վարույթի նյութերը տուժողի լիազոր ներկայացուցիչ Էդ.Հակոբյանին ծանոթացնելու մասին արձանագրություն[5]:

11. Նախորդ կետում նշված արձանագրության մեջ Էդ.Հակոբյանը կատարել է գրառում, որով նախաքննության մարմնին խնդրել է քրեական վարույթի նյութերի էլեկտրոնային տարբերակն ուղարկել իր էլեկտրոնային փոստի հասցեին, ինչպես նաև միջնորդություններ հարուցելու համար տրամադրել մեկ աշխատանքային օր[6]:

12. Նախաքննության մարմնի՝ 2025 թվականի հունվարի 17-ի որոշմամբ թիվ ******** քրեական վարույթը կարճվել է[7]:

13. Տուժող «**********» ՍՊ ընկերության լիազոր ներկայացուցիչ Էդ.Հակոբյանի կողմից Առաջին ատյանի դատարան ներկայացված բողոքից երևում է, որ բողոքաբերը վիճարկել է վարույթը կարճելու մասին վերը նշված որոշման և դրա դեմ բերված բողոքը հսկող դատախազի կողմից քննության առնվելու մասին որոշման

---

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 4-5:
[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 21-22:
[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 24-25:
[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 297-298:
[5] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 50-51:
[6] Տե՛ս նույն տեղում:
[7] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 59-68:

իրավաչափությունը, ինչպես նաև փաստարկել է նախաքննության մարմնի կողմից քրեական վարույթի նյութերը տուժող ընկերությանը տրամադրված չլինելու մասին[8]:

14. Առաջին ատյանի դատարանն արձանագրել է հետևյալը. *«(…) Ինչպես հայտնի է դառնում [ՀՀ քրեական դատավարության] օրենսգրքի [207-րդ] հոդվածի վերլուծությունից, քննիչը նախաքննության ավարտի մասին գրավոր ծանուցում է վարույթի մասնավոր մասնակիցներին, ինչպես նաև սույն օրենսգրքի 199-րդ հոդվածի 3-րդ մասում նշված անձանց և հայտնում վարույթի նյութերին ծանոթանալու տեղը, ժամանակը և հաջորդականությունը:*

(…)

*Դատարանը, ուսումնասիրելով վերը նշված փաստական տվյալները և դրանք համադրելով ներկայացված փաստերի հետ, արձանագրում է, որ վարույթի մասնավոր մասնակից է համարվում մեղադրյալը, նրա օրինական ներկայացուցիչը, պաշտպանը, տուժողը, գույքային պատասխանողը, տուժողի և գույքային պատասխանողի օրինական ներկայացուցիչը և լիազոր ներկայացուցիչը, իսկ սույն դեպքում վարույթի մասնակից ճանաչված տուժող կազմակերպությունը «***** ********» ՍՊ ընկերությունն է, իսկ օրինական ներկայացուցիչ է ճանաչվել ընկերության տնօրեն Վ***** Ա*******-ը, ուստի անհասկանալի է վարույթն իրականացնող մարմնի կողմից ընկերության 100% բաժնեփեր հանդիսացող և սույն գործի շրջանակներում վկայի կարգավիճակ ունեցող անձ Հ**** Ա********-ին ծանուցելու փաստը, քանի որ դրանով իսկ կոպտորեն խախտվել են տուժողի իրավունքները:*

*Ուստի վերը նշված վերլուծությունը և իրավանորմերը համադրելով՝ պարզ է դառնում, որ չնայած նրան, որ Հ**** Ա********-ը չի հանդիսանում վարույթի մասնավոր մասնակից, ծանուցվել է վարույթի ավարտի մասին, որի պայմաններում տուժող կողմը զրկվել է որևէ միջնորդություն ներկայացնելու հնարավորությունից, որն անընդունելի է:*

Վերոնշվածի պայմաններում Դատարանն արձանագրում է, որ չնայած նրան, որ քննիչի կողմից կատարվել են վարույթի քննությանն ուղղված որոշակի գործողություններ, սակայն դրանցից զատ առկա է այնպիսի փաստ՝

[8] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 57-66:

մասնավորապես պուժողին ծանուցած չլինելու հանգամանքը, որը խոչընդոտներ է առաջացրել պուժող ընկերության իրավունքների իրացման համար, ուստի այս ամենը Դատարանի համար անընդունելի է:

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից բարձրացված մյուս հարցին, Դատարանն արձանագրում է, որ դրանց քննությունը սույն փուլում անտեղին է, քանի որ ավարտ հայտնելու ժամանակ պուժողին հնարավորություն է ընձեռվում ներկայացնելու միջնորդություններ, իսկ բարձրացված հարցերը միջնորդությունների քննարկման արդյունքում կարող են գտնել իրենց լուծումները:

Ելնելով վերոգրյալից՝ Դատարանը գալիս է այն եզրահանգման, որ քննիչը թույլ է տվել բողոքաբերի՝ օրենքով երաշխավորված իրավունքների խախտում, հետևապես ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման: (…)»:

Արդյունքում վարույթի հանրային մասնակիցը պարտավորեցվել է վերացնել քրեական վարույթը կարճելու մասին 2025 թվականի հունվարի 17-ի որոշումը և հանձնարարել շարունակել նախաքննությունը[9]:

15. Վերաքննիչ դատարանը 2025 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Վերաքննիչ դատարանի կողմից արձանագրվում է, որ սույն վարույթով դիտվում է հետևյալ իրավիճակը.*

*Վարույթով որպես պուժող ճանաչվել է «**********» ՍՊ ընկերությունը, որպես պուժողի օրինական ներկայացուցիչ՝ ընկերության տնօրեն Վ******** Ա**********-ը, իսկ որպես պուժողի օրինական ներկայացուցիչ՝ փաստաբան Էդգար Հակոբյանը:*

*«**********» ՍՊ ընկերության 100% բաժնեփեր հանդիսացող Հ****** Ա*********-ը սույն քրեական վարույթով հարցաքննվել է որպես վկա:*

*Միաժամանակ, մինչ քրեական գործով վարույթի կարճումը՝ քննիչի կողմից վարույթի նյութերի ծանոթացման համար ծանուցվել են «**********» ընկերության լիազոր ներկայացուցիչ Էդգար Հակոբյանը և ընկերության 100 տոկոս բաժնեփեր հանդիսացող, վարույթով վկա Հ***** Ա******-ը, սակայն ընկերության օրինական ներկայացուցիչ Վ******** Ա**********-ն այդ մասին չի ծանուցվել, ինչը ՀՀ հակակոռուպցիոն դատարանը գնահատել է որպես պուժողի իրավունքների*

[9] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 75-87:

կոպիտ խախտում, որի պայմաններում տուժող կողմը զրկվել է որևէ միջնորդություն ներկայացնելու հնարավորությունից:

Մինչդեռ, ուսումնասիրելով ինչպես ներկայացված հատուկ վերանայման բողոքը, այնպես էլ վիճարկվող դատական ակտը և դրա վերաբերելի նյութերը, Վերաքննիչ դատարանի համար առկա պատկերն էականորեն տարբեր է:

*Մասնավորապես, թեև քննիչը պարտականություն է կրել նյութերի ծանոթացման նպատակով ծանուցել ինչպես տուժողի լիազոր ներկայացուցչին, այնպես էլ՝ օրինական ներկայացուցչին, իսկ վկային ծանուցելու անհրաժեշտությունն օբեկտիվ իմաստով բացակայել է, սակայն, չի կարելի փաստել, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի գործողությունները տուժողի իրավունքները և օրինական շահերն անհամաչափորեն սահմանափակել են: Այլ խոսքով՝ քննիչի կողմից նյութերի ծանոթացման նպատակով ծանուցվել են ինչպես տուժողի լիազոր ներկայացուցիչը, ով հանդիսանում է վարույթի պրոֆեսիոնալ մասնակից /փաստաբան/, այնպես էլ, թեև վկայի դատավարական կարգավիճակ ունեցող, սակայն, միաժամանակ ընկերության 100% բաժնետեր հանդիսացող Հ***** Մ*******-ը, որպիսի պայմաններում չի կարելի փաստել, թե տուժողը զրկված է եղել իր իրավունքներն անխոչընդոտ իրացնելու հնարավորությունից, քանի որ տուժող կազմակերպությունը փաստացի տիրապետել է վարույթով առկա իրադրությանը: Ընդ որում, վարույթի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ընկերության լիազոր ներկայացուցիչն անգամ ներկայացրել է միջնորդություններ, ընդ որում, նաև իրենց տրամադրված ժամկետը երկարաձգելու մասին, ինչն ինքնին վկայում է այն մասին, որ տուժողը ունեցել է բոլոր հնարավորությունները՝ իր իրավունքներն անխոչընդոտ իրացնելու:*

Վերոգրյալի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանն իր համաձայնությունն է հայտնում բողոքի հեղինակի այն դիտարկմանը, որ վկայակոչված քրեադատավարական նորմը չպետք է մեկնաբանվի խիստ ձևականացված և արձանագրվի այն փաստը, թե տեղի է ունեցել տուժողի իրավունքների և ազատությունների նկատմամբ կոպիտ խախտում և վերջինը զրկվել է իր՝ օրենքով երաշխավորված իրավունքներն իրացնելու հնարավորությունից այն

պայմաններում, երբ ինչպես օրինական, այնպես էլ լիազոր ներկայացուցչի առկայության դեպքում նրանցից չի ծանուցվել միայն մեկը:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում ստորադաս դատարանի այն դատողությանը, որ վկայակոչված իրողությունն ի հայտ է բերել տուժողի իրավունքների անհամաչափ սահմանափակում, որը պետք է հանգեցներ բողոքի բավարարմանը և վարույթի հանրային մասնակիցների վրա այդ խախտումից բխող հետևանքների վերացման պարտականության սահմանմանը:

*Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ներկայացված հատուկ վերանայման բողոքը պետք է բավարարել, իսկ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի թիվ ՀԿԴ/0082/11/25 վարույթով 2025 թվականի մայիսի 26-ի «Մինչդատական ակտի դեմ բողոքը քննելու մասին» որոշումը բեկանել՝ կայացնելով փոխարինող դատական ակտ՝ մերժելով «**********» ՍՊ ընկերության լիազոր ներկայացուցիչ Էդգար Արմենի Հակոբյանի կողմից ներկայացված՝ «Թիվ ******* քրեական վարույթով տուժողի իրավունքների խախտումը վերացնելու պահանջի վերաբերյալ» վերտառությամբ [բողոքը]: (…)»*[10]:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

16. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ նախաքննության ավարտի կապակցությամբ քրեական վարույթի նյութերին ծանոթանալու մասին տուժող «**********» ՍՊ ընկերության օրինական ներկայացուցչի ծանուցված չլինելու հետևանքով տուժողի իրավունքները չեն ենթարկվել անհամաչափ սահմանափակման:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սույն օրենսգրքում օգտագործվող ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

(…)

[10] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 20-30:

*13) **վարույթի մասնավոր մասնակից**՝ մեղադրյալը, նրա օրինական ներկայացուցիչը, պաշտպանը, տուժողը, գույքային պատասխանողը, տուժողի և գույքային պատասխանողի օրինական ներկայացուցիչը և լիազոր ներկայացուցիչը.*

(…)

*26) **տուժող**՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, պետություն, համայնք կամ միջազգային կազմակերպություն, որի վերաբերյալ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ ենթադրյալ հանցանքով նրան պատճառվել է վնաս կամ կարող էր պատճառվել՝ ենթադրյալ հանցանքն ավարտին հասցնելու դեպքում.*

(…)

*30) **օրինական ներկայացուցիչ**՝ (…) տուժող կամ գույքային պատասխանող իրավաբանական անձի ղեկավարը.*

*31) **լիազոր ներկայացուցիչ**՝ փաստաբան, որին տուժողը կամ գույքային պատասխանողը պատշաճ լիազորել է վարույթի ընթացքում ներկայացնել իր իրավահափ շահերը, ինչպես նաև իրավաբանական անձ հանդիսացող տուժողի կամ գույքային պատասխանողի պատշաճ լիազորված աշխատակիցը. (…)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

«Տուժող ճանաչված իրավաբանական անձի իրավունքները և պարտականություններն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը»:

Նույն օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝

«1. (…) Տուժող ճանաչված իրավաբանական անձի ղեկավարն իրավունք ունի ճանաչվելու տուժողի օրինական ներկայացուցիչ:

2. Անձը տուժողի օրինական ներկայացուցիչ է ճանաչվում վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ:

(…)

4. Տուժողի օրինական ներկայացուցիչն ունի տուժողի բոլոր իրավունքները և պարտականությունները, բացառությամբ տուժողի անձից անբաժանելի իրավունքների և պարտականությունների:

(…)

7. Տուժողի օրինական ներկայացուցիչն իր իրավունքներից օգտվում և իր վրա դրված պարտականությունները կատարում է անձամբ:

8. Տուժողի օրինական ներկայացուցիչը կարող է հարցաքննվել որպես վկա»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անձը տուժողի լիազոր ներկայացուցիչ է ճանաչվում վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ:

(…)

3. Ընդհանուր լիազորությամբ տուժողի ներկայացուցիչն ունի տուժողի բոլոր իրավունքները և պարտականությունները, բացառությամբ տուժողի անձից անբաժանելի իրավունքների և պարտականությունների: Նա իրավունք ունի մասնակցելու այն բոլոր վարութային գործողություններին, որոնց մասնակցում է տուժողը: (…)»:

17.1. Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ տուժողը, հանդիսանալով դատավարության ինքնուրույն սուբյեկտ, իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը կարող է իրացնել ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցչի միջոցով, սակայն իրավաբանական անձի բնույթով պայմանավորված՝ տուժող ճանաչված իրավաբանական անձը քրեական վարույթում հանդես է գալիս ներկայացուցչի միջոցով, մասնավորապես, ըստ օրենսդրական կարգավորման՝ տուժող իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը: Միաժամանակ տուժողի ներկայացուցիչ ճանաչելու քրեադատավարական կարգին վերաբերող դրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է նաև տուժող իրավաբանական անձի ներկայացուցչության այլ ձև՝ լիազոր ներկայացուցչի միջոցով: Ընդ որում, եթե օրինական ներկայացուցիչ ճանաչվում է համապատասխան իրավաբանական անձի ղեկավարը, ապա լիազոր ներկայացուցիչ կարող է ճանաչվել ինչպես փաստաբան հանդիսացող անձը, որին տուժողը պատշաճ լիազորել է վարույթի ընթացքում ներկայացնել իր իրավաչափ շահերը, այնպես էլ տուժող ճանաչված իրավաբանական անձի պատշաճ լիազորված աշխատակիցը: Այսինքն՝ լիազոր ներկայացուցչին տուժող իրավաբանական անձի իրավունքներն ու օրինական շահերը ներկայացնելու լիազորությունը տրվում է

օրինական ներկայացուցչի կողմից՝ այն հաստատող համապատասխան փաստաթղթի միջոցով: Այնուամենայնիվ, որպեսզի տուժողի ներկայացուցիչը դառնա քրեադատավարական իրավահարաբերության սուբյեկտ, անհրաժեշտ է վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշումը:

Դատավարական հիշյալ սուբյեկտների առանձնահատկությունը կայանում է նաև նրանում, որ տուժողի օրինական ներկայացուցիչն իրավունքի ուժով ունի տուժողի բոլոր իրավունքները և պարտականությունները, բացառությամբ տուժողի անձից անբաժանելի իրավունքների և պարտականությունների, մինչդեռ լիազոր ներկայացուցչի վարութային իրավասությունների շրջանակը պայմանավորված է լիազորագրով նրան վերապահված իրավասությունների ծավալով, մասնավորապես՝ տուժողի լիազոր ներկայացուցիչը կարող է ունենալ ընդհանուր բնույթի լիազորություններ, որի պայմաններում նա նույնպես ստանձնում է տուժողին վերապահված բոլոր իրավունքները և պարտականությունները, բացառությամբ տուժողի անձից անբաժանելի իրավունքների և պարտականությունների: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով տուժողի լիազոր ներկայացուցչին ընձեռվել է նաև հատուկ լիազորությամբ հանդես գալու իրավասություն՝ նրա գործառույթների շրջանակում նախատեսելով նաև տուժողի անձից անբաժանելի որոշ իրավունքների իրականացման հնարավորություն:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տուժող իրավաբանական անձի լիազոր ներկայացուցիչն ու օրինական ներկայացուցիչը, ըստ էության, ունեն նույն իրավական կարգավիճակն ու լիազորությունների շրջանակը, և նրանց դերն ուղղված է տուժողի իրավաչափ շահերն արդյունավետորեն ապահովելու միասնական նպատակին:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քննիչը վարույթի նյութերը մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի և պաշտպանի ծանոթացմանը ներկայացնում է բոլոր դեպքերում, իսկ վարույթի մասնավոր մյուս մասնակիցներին, ինչպես նաև սույն օրենսգրքի 199-րդ հոդվածի 3-րդ մասում նշված անձանց՝ նրանց գրավոր խնդրանքով:

(…)

3. Վարույթի նյութերին ծանոթացող անձի գրավոր դիմումով նրան է հանձնվում վարույթի նյութերի էլեկտրոնային տարբերակը:

(…)

6. Վարույթի նյութերին ծանոթանալու համար վարույթի մասնակիցներին տրամադրվում է ողջամիտ ժամկետ»:

Նույն օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Վարույթի նյութերին ծանոթանալու փաստն ամրագրվում է քննիչի կազմած արձանագրությամբ, որը ստորագրում են քննիչը և վարույթի նյութերին ծանոթացած անձը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Սույն օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերից որևէ մեկն առկա համարելով՝ քննիչը նախաքննության ավարտի մասին գրավոր ծանուցում է վարույթի մասնավոր մասնակիցներին, ինչպես նաև սույն օրենսգրքի 199-րդ հոդվածի 3-րդ մասում նշված անձանց և հայտնում վարույթի նյութերին ծանոթանալու տեղը, ժամանակը և հաջորդականությունը: (…)»:

18.1. Վճռաբեկ դատարանը, դատական պաշտպանության իրավունքի համատեքստում անդրադառնալով քրեական արդարադատության համակարգում դատավարության մասնակիցների կամ շահագրգիռ անձանց կողմից վարույթի (գործի) նյութերին ծանոթանալու իրավունքին[11], արձանագրել է, որ. *«(…) [Գ]ործի նյութերին ծանոթանալու իրավունքն ունի հիմնարար նշանակություն դատավարության մասնակիցների կամ շահագրգիռ անձանց կողմից իրենց իրավունքների ու օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունն իրականացնելու համար: Մասնավորապես, այն հնարավորություն է տալիս մի կողմից պատկերացում կազմելու գործի ընթացքի մասին, միջնորդելու կատարել լրացուցիչ քննչական կամ այլ դատավարական գործողություններ, մյուս կողմից՝*

[11] Վճռաբեկ դատարանի՝ քրեական արդարադատության համակարգում դատավարության մասնակիցների կամ շահագրգիռ անձանց կողմից գործի նյութերին ծանոթանալու իրավունքի վերաբերյալ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները շարունակում են վերաբերելի մասով (*mutatis mutandis*) կիրառելի լինել նաև գործող քրեադատավարական կարգավորումների նկատմամբ:

անհրաժեշտության դեպքում ներկայացնելու փաստական տվյալներով հիմնավորված բողոք վարույթն իրականացնող մարմնի ոչ իրավաչափ որոշումների կամ գործողությունների (անգործության) դեմ»[12]:

Վերահաստատելով մեջբերված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ քրեական վարույթի նյութերին ծանոթանալու իրավունքի և դրանից բխող դատավարական հնարավորությունների կենսագործումը կարևոր երաշխիք է տվյալ դեպքում տուժողի արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքների պատշաճ ապահովման համար, ուստի անհրաժեշտ է, որ վարույթն իրականացնող մարմինը տուժող ճանաչված իրավաբանական անձի օրինական կամ վարույթին ներգրավված լինելու դեպքում նաև լիազոր ներկայացուցչի միջոցով ապահովի այդ իրավունքի իրացման հնարավորությունը:

19. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- 2023 թվականի նոյեմբերի 24-ին փաստաբան Էդ.Հակոբյանը ներկայացրել է ենթադրյալ հանցանքի մասին հաղորդում[13],

- 2023 թվականի դեկտեմբերի 25-ին «**********» ՍՊ ընկերությունը ճանաչվել է տուժող[14],

- 2024 թվականի դեկտեմբերի 27-ին կազմվել է արձանագրություն՝ նախաքննության ավարտի վերաբերյալ վկա Հ.Ս********-ին և տուժողի լիազոր ներկայացուցիչ, փաստաբան Էդ.Հակոբյանին ծանուցելու մասին, որը նույն օրվա գրությամբ ուղարկվել է նշված անձանց[15],

- 2024 թվականի դեկտեմբերի 30-ին կազմվել է արձանագրություն՝ քրեական վարույթի նյութերը տուժողի լիազոր ներկայացուցիչ Էդ.Հակոբյանին ծանոթացնելու մասին: Միաժամանակ Էդ.Հակոբյանը նախաքննության մարմնին խնդրել է քրեական վարույթի նյութերի էլեկտրոնային տարբերակն ուղարկել իր էլեկտրոնային փոստի հասցեին, ինչպես նաև միջնորդություններ հարուցելու համար տրամադրել մեկ աշխատանքային օր[16],

---

[12] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *«Հեսսար» ՍՊԸ*-ի գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ ԱՐԴ1/0006/11/17 որոշման 15-րդ կետը:

[13] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

[14] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

[15] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

[16] Տե՛ս սույն որոշման 10-11-րդ կետերը:

- նախաքննության մարմնի՝ 2025 թվականի հունվարի 17-ի որոշմամբ թիվ ******* քրեական վարույթը կարճվել է[17],

- Առաջին ատյանի դատարանը, բավարարելով վերը նշված եզրափակիչ դատավարական ակտի դեմ տուժողի լիազոր ներկայացուցիչ Էդ.Հակոբյանի բողոքը, մասնավորապես արձանագրել է, որ նախաքննության մարմնի կողմից նախաքննության ավարտի մասին տուժող «**********» ՍՊ ընկերության օրինական ներկայացուցիչ Վ.Ա*********-ի փոխարեն ընկերության 100 տոկոս բաժնետեր հանդիսացող և սույն վարույթի շրջանակներում վկայի դատավարական կարգավիճակ ունեցող անձ Հ.Ս********-ին ծանուցելու արդյունքում կոպտորեն խախտվել են տուժողի իրավունքները և վերջինս զրկվել է որևէ միջնորդություն ներկայացնելու հնարավորությունից[18],

- Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ նախաքննության ավարտի կապակցությամբ քրեական վարույթի նյութերին ծանոթանալու մասին նախաքննության մարմինը նաև տուժողի օրինական ներկայացուցչին ծանուցելու պարտականություն է կրել, այդուհանդերձ, գտել է, որ այն պայմաններում, երբ այդ մասին ծանուցվել են ինչպես տուժողի լիազոր ներկայացուցիչը, այնպես էլ, թեև վկայի դատավարական կարգավիճակ ունեցող, սակայն ընկերության 100 տոկոս բաժնետեր հանդիսացող անձը, ապա չի կարելի փաստել, որ տուժողը զրկված է եղել իր իրավունքներն անխոչընդոտ իրացնելու հնարավորությունից:

Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ տուժող ընկերությունը փաստացի տիրապետել է քրեական վարույթով առկա իրադրությանը, ընդ որում, տուժողի լիազոր ներկայացուցիչը ներկայացրել է միջնորդություններ՝ նաև տրամադրված ժամկետը երկարաձգելու վերաբերյալ, ինչն ինքնին վկայում է, որ տուժողն ունեցել է իր իրավունքներն անխոչընդոտ իրացնելու բոլոր հնարավորությունները:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատական ակտը և տուժողի լիազոր ներկայացուցիչ Էդ.Հակոբյանի՝ մինչդատական ակտի դեմ բողոքը՝ մերժել[19]:

---

[17] Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:
[18] Տե՛ս սույն որոշման 14-րդ կետը:
[19] Տե՛ս սույն որոշման 15-րդ կետը:

20. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավակարգավորումների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական վարույթի նյութերին ծանոթանալու մասին տուժող «********** *****» ՍՊ ընկերության օրինական ներկայացուցչին չծանուցելու հետևանքով տուժողի իրավունքների խախտման բացակայության մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր է:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական վարույթի ընթացքում տուժողի իրավունքների արդյունավետ պաշտպանության հարցը ենթադրում է գնահատել, թե որքանով է քրեական վարույթի քննությունը տուժողին հասու եղել, արդյոք ապահովվել է լսված լինելու, դիրքորոշումներ հայտնելու, անհրաժեշտ միջնորդություններ ներկայացնելու, ինչպես նաև վարութային ակտերը բողոքարկելու իրական հնարավորությունը:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տուժող «**********» ՍՊ ընկերության ղեկավարն իրավունք ուներ ճանաչվելու օրինական ներկայացուցիչ, իսկ նախաքննության մարմինը պարտավոր էր ապահովել տուժողի կողմից իր դատավարական իրավունքներն օրինական ներկայացուցչի միջոցով իրականացնելու հնարավորությունը: Այդուհանդերձ, տվյալ դեպքում չպետք է անտեսել այն հանգամանքը, որ տուժող «**********» ՍՊ ընկերությունը քրեական վարույթում հանդես է եկել լիազոր ներկայացուցչի՝ Էդ.Հակոբյանի միջոցով, ով, ինչպես երևում է Վճռաբեկ դատարանում ստացված նյութերում առկա փաստական տվյալներից[20], իրացրել է տուժողի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունը, մասնավորապես, Էդ.Հակոբյանն է առերևույթ հանցանքի մասին հաղորդում ներկայացրել, հասցեագրել է դիմումներ, ներկայացրել միջնորդություններ, մասնակցել է նշված ընկերության հիմնադիր-տնօրեն Հ.Ս*******-ի հարցաքննությանը, ծանուցվել է նախաքննության ավարտի մասին և ըստ այդմ՝ ծանոթացել քրեական վարույթի նյութերին՝ խնդրելով տրամադրել դրանց էլեկտրոնային տարբերակը, ինչպես նաև

[20] Տե՛ս թիվ ՀԿԴ/0082/11/25 վարույթի նյութերը, ինչպես նաև սույն որոշման 7-րդ, 10-11-րդ և 13-րդ կետերը:

հնարավոր միջնորդություններ ներկայացնելու համար մեկօրյա ժամկետ, իսկ արդյունքում բողոքարկել է տուժողի իրավաչափ շահերին առնչվող՝ քրեական վարույթը եզրափակող դատավարական ակտը՝ այդպիսով ապահովելով նաև տուժողի դատական պաշտպանության իրավունքը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ տուժողի լիազոր ներկայացուցիչ Էդ.Հակոբյանի դրսևորած դատավարական վարքագիծը բավարար է՝ արձանագրելու, որ տուժողի իրավունքների և օրինական շահերի անհարկի սահմանափակում տեղի չի ունեցել. տվյալ դեպքում տուժողի՝ նյութերին ծանոթանալու իրավունքը և դրանից բխող դատավարական հնարավորությունները փաստացի իրացվել են լիազոր ներկայացուցչի միջոցով:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հատկանշական է համարում այն հանգամանքը, որ Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում չի պատճառաբանել, թե նախաքննության ավարտի մասին օրինական ներկայացուցչի ծանուցված չլինելու արդյունքում տուժողի որ իրավունքն է խախտվել, և այն ինչ հետևանք է ունեցել իրավաչափ շահերի ապահովման տեսանկյունից, այլ բավարարվել է տուժողի կողմից միջնորդություններ ներկայացնելու հնարավորությունից զրկված լինելու մասին արձանագրմամբ, մինչդեռ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատարանի կողմից անձի իրավունքի խախտում արձանագրվելու դեպքում անհրաժեշտ է պատճառաբանել, թե վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեադատավարական օրենսդրության որ պահանջն է խախտվել, խախտումն ինչում է դրսևորվել և դրա հետևանքով անձի որ իրավունքը կամ ազատությունն է սահմանափակվել: Հակառակ դեպքում դատարանի կայացրած որոշումը կդառնա կամայական և ինքնանպատակ[21]:

21. Արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ նախաքննության ավարտի կապակցությամբ քրեական վարույթի նյութերին ծանոթանալու մասին տուժող «**********» ՍՊ ընկերության օրինական ներկայացուցչի ծանուցված չլինելու հետևանքով

[21] Տե՛ս նաև, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Մանվել և Լիդա Հովհաննիսյանների* գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԱՐԱԴ/0001/11/14 որոշման 18-րդ կետը:

տուժողի իրավունքները չեն ենթարկվել անհամաչափ սահմանափակման, հիմնավոր է:

22. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. ստորադաս դատարանների կողմից ապահովվե՞լ է արդյոք տուժող «**********» ՍՊ ընկերության արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը:

23. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածի համաձայն՝

«Հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ»:

23.1. ՀՀ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքին, ի թիվս այլնի, ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության կոնկրետ գործի ինչպես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում,

- դատական բողոքարկումը, որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները,

- դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար և հրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում

բացահայտելու և շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը,

- դատական բողոքարկումը՝ որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի՝ վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները,

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ[22]:

24. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Եվրոպական կոնվենցիա) 13-րդ հոդվածով նախատեսված երաշխիքի համատեքստում իրավական դիրքորոշումներ է արտահայտել այն մասին, որ.

- Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածը երաշխավորում է ներպետական մակարդակում պաշտպանության միջոցի մատչելիությունը՝ Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների ու ազատությունների էությունը խթանելու նպատակով՝ ինչպիսի ձևով էլ որ դրանք երաշխավորված լինեն ներպետական իրավակարգում[23],

- Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածը պահանջում է, որ ներպետական պաշտպանության միջոց առկա լինի Եվրոպական կոնվենցիայով նախատեսված՝ «վիճարկելի բողոքի» էությունը քննելու և համապատասխան օգնություն տրամադրելու համար, չնայած որ պայմանավորվող պետություններին տրվում է

---

[22] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 8-ի թիվ ՍԴՈ-936 որոշումը, 6-րդ կետ և 2015 թվականի փետրվարի 10-ի թիվ ՍԴՈ-1190 որոշումը, 9-րդ կետ:

[23] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Petropavlovskis v. Latvia* գործով 2015 թվականի հունվարի 13-ի վճիռը, գանգատ թիվ 44230/06, կետ 91:

որոշակի թույլատրելի հայեցողության շրջանակ՝ կապված այն ձևի հետ, որով նրանք կատարում են Եվրոպական կոնվենցիայի այս դրույթով նախատեսված իրենց պարտականությունները[24],

- Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածով ամրագրված համապատասխան պարտավորության շրջանակը տարբերվում է՝ կախված Եվրոպական կոնվենցիայով դիմողի ներկայացրած բողոքի բնույթից: Այնուհանդերձ, հոդված 13-ով պահանջվող պաշտպանության միջոցը պետք է լինի «արդյունավետ»՝ ինչպես գործնականում, այնպես էլ օրենսդրության մեջ: Մասնավորապես, դրա կիրառումը չպետք է անարդարացիորեն խոչընդոտվի պատասխանող պետության գործողություններով կամ բացթողումներով[25]:

25. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ոչ ոք չի կարող զրկվել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննվելու իրավունքից, որոնց ընդդատությանը կամ իրավասությանն այն վերապահված է օրենքով:

(…)

4. Վարույթի հանրային մասնակիցների վարութային ակտերը, որոնք առնչվում են անձի իրավունքներին և ազատություններին, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով ենթակա են դատական սպուգման»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 299-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատական բողոքարկման ենթակա են հետևյալ մինչդատական ակտերը.

(…)

3) քրեական վարույթը կարճելու մասին որոշումը. (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 304-րդ հոդվածի համաձայն՝

«1. Մինչդատական ակտի վիճարկման վարույթի արդյունքով դատարանը որոշմամբ ամբողջությամբ կամ մասնակի բավարարում է բողոքը կամ մերժում է այն:

(…)

[24] Տե՛ս նույն տեղում:

[25] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Paul and Audrey Edwards v. The United Kingdom* գործով 2002 թվականի մարտի 14-ի վճիռը, գանգատ թիվ 46477/99, կետ 96:

3. Բողոքը բավարարելու դեպքում դատարանը վարույթի հանրային մասնակցի վրա դնում է անձի իրավունքների խախտումը վերացնելուն ուղղված կոնկրետ վարութային ակտեր կայացնելու (կատարելու) պարտականություն: (…)»:

25.1. Իրավական պաշտպանության միջոցների վերաբերյալ ձևավորված նախադեպային իրավունքում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է դատական պաշտպանության առանձնահատուկ դերը, որի բաղադրիչն է նաև դատավարական գործողությունների և որոշումների բողոքարկման իրավունքը: Դատական պաշտպանության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում՝ ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա[26]:

26. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Նախաքննության մարմնի՝ 2025 թվականի հունվարի 17-ին որոշմամբ թիվ ******* քրեական վարույթը կարճվել է[27],

- Տուժող «**********» ՍՊ ընկերության լիազոր ներկայացուցիչ Էդ.Հակոբյանն Առաջին ատյանի դատարան ներկայացրած բողոքով, ի թիվս այլնի, փաստարկներ է ներկայացրել նաև քրեական վարույթը կարճելու մասին որոշման և դրա դեմ բերված բողոքը հսկող դատախազի կողմից քննության առնվելու մասին որոշման իրավաչափության կապակցությամբ[28],

- Առաջին ատյանի դատարանը մինչդատական ակտի դեմ ներկայացված բողոքի քննության արդյունքում միայն անդրադարձել է բողոքաբերի՝ նախաքննության ավարտի մասին տուժող ընկերության ծանուցված չլինելու մասին պնդմանը և ըստ այդմ՝ տուժող իրավաբանական անձի իրավունքների խախտում արձանագրելով՝ բողոքը բավարարել է, իսկ վարույթի հանրային մասնակցին պարտավորեցրել վերացնել քրեական վարույթը կարճելու մասին որոշումը:

---

[26] Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Տիգրան Հովհաննիսյանի* գործով 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0066/11/12 որոշումը և *Արթուր Այվազյանի* գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴ2/0007/15/12 որոշման 16-րդ կետը:

[27] Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

[28] Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:

Միևնույն ժամանակ Առաջին ատյանի դատարանն իր որոշմամբ բովանդակային գնահատման չի ենթարկել բողոքաբերի մյուս՝ քրեական վարույթը կարճելու մասին որոշման իրավաչափության կապակցությամբ ներկայացրած փաստարկները: Ընդ որում, նշված մոտեցումն Առաջին ատյանի դատարանը, ըստ էության, պայմանավորել է այն հանգամանքով, որ քննիչի կողմից տուժող «****** **********» ՍՊ ընկերության իրավունքի խախտումը վերացվելուց հետո ներկայացված միջնորդությունների քննարկման արդյունքում տուժողի բարձրացրած հարցերը կարող են լուծվել[29],

- Վերաքննիչ դատարանը հսկող դատախազի բողոքի քննության արդյունքում բեկանել է Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ մերժելով տուժողի լիազոր ներկայացուցիչ Էդ.Հակոբյանի՝ մինչդատական ակտի դեմ բողոքը[30]:

Արդյունքում նախաքննության մարմնի՝ քրեական վարույթը կարճելու մասին 2025 թվականի հունվարի 17-ի որոշումը փաստացի չի դարձել դատական ստուգման առարկա:

27. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 23-25.1-ին կետերում մեջբերված նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, քրեական վարույթի նյութերին ծանոթանալու մասին տուժողի ծանուցված չլինելու պատճառաբանությամբ տուժողի լիազոր ներկայացուցիչ Էդ.Հակոբյանի բողոքը բավարարելով հանդերձ, պատշաճ իրավական գնահատականի չի արժանացրել քրեական վարույթը կարճելու մասին 2025 թվականի հունվարի 17-ի որոշման իրավաչափության վերաբերյալ բողոքաբերի փաստարկները, իսկ Վերաքննիչ դատարանը, հսկող դատախազի բողոքի քննության արդյունքում բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, կայացրել է տուժողի իրավունքների պաշտպանության հնարավորությունը չեզոքացնող դատական ակտ: Արդյունքում ստորադաս դատարանների կողմից դատական պաշտպանությունը դարձել է պատրանքային, և տուժողը զրկվել է իր իրավաչափ շահերին առնչվող դատական ակտը դատական ստուգման ենթարկելու հնարավորությունից:

---

[29] Տե՛ս սույն որոշման 14-րդ կետը:

[30] Տե՛ս սույն որոշման 15-րդ կետը:

Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանը, հանգելով տուժողի իրավունքների խախտման վերաբերյալ հետևության, այդուհանդերձ, էության մեջ գնահատման չի ենթարկել վարույթը կարճելու մասին նախաքննության մարմնի որոշման իրավաչափությունը վիճարկող բողոքի հիմնավորումները և դրանց վերաբերյալ որևէ եզրահանգում չի կատարել, մինչդեռ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ներկայացված բողոքում նշված հիմքերն ու դրանք հաստատող փաստերը ոչ միայն նախանշում են դատական ստուգման սահմանները, այլ նաև կանխորոշում են այն հարցերի շրջանակը, որոնք պետք է քննարկման առարկա դարձվեն տվյալ վարույթի շրջանակներում, և որոնց կապակցությամբ ստուգումն իրականացնող դատարանը պետք է հանգի համապատասխան հետևության[31]:

Նշվածի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանն անհիմն կերպով դատական ստուգման չի ենթարկել քրեական վարույթը կարճելու մասին 2025 թվականի հունվարի 17-ի որոշումը, մինչդեռ պարտավոր էր քննարկման առարկա դաձնել տուժողի լիազոր ներկայացուցչի փաստարկները և հանգել համապատասխան հետևության:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական վարույթի նյութերին ծանոթացած չլինելու հետևանքով տուժողի իրավունքների խախտման մասին Առաջին ատյանի դատարանի հետևությունը և դրա առնչությամբ կայացված որոշումը որոշակիորեն ընձեռել են մինչդատական վարույթում տուժողի իրավունքների ապահովման հնարավորություն, սակայն այդ մասով ստորադաս դատարանի դատական ակտը Վերաքննիչ դատարանի կողմից բեկանվելու արդյունքում տուժող իրավաբանական անձն ամբողջությամբ զրկվել է իր իրավաչափ շահերի պաշտպանությունը հայցելու հնարավորությունից:

Նշվածի համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով քրեական վարույթի նյութերին ծանոթանալու վերաբերյալ ծանուցված չլինելու հետևանքով տուժողի իրավունքների անհամաչափ սահմանափակում թույլ տրված լինելու մասին Առաջին ատյանի դատարանի

[31] Այս կապակցությամբ տե՛ս նաև, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Մկրտիչ Պողոսյանի, Հովհաննես Մարտիրոսյանի և Սեյրան Պետրոսյանի* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՇԴ/0034/01/15 որոշման 14-րդ կետը:

որոշումը և կայացնելով տարբերվող դատական ակտ, միաժամանակ հաշվի չի առել, որ Առաջին ատյանի դատարանը տուժողի լիազոր ներկայացուցիչ Էդ.Հակոբյանի բողոքում բարձրացված մյուս փաստարկները փաստացի շրջանցել է և դրանց հիմնավորված իրավական գնահատական չի տվել: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով տուժողի իրավունքների պաշտպանության՝ պետության պոզիտիվ պարտավորության, ինչպես նաև նրա՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացվելիության ապահովման անհրաժեշտությունը, պետք է տուժողի լիազոր ներկայացուցչի՝ մինչդատական ակտի դեմ բողոքի մյուս հիմնավորումները քննության առնելու և համապատասխան հետևության հանգելու համար վարույթը փոխանցեր Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն էլ իր հերթին անիրավաչափ սահմանափակման է ենթարկել տուժող «**********» ՍՊ ընկերության՝ մինչդատական ակտի բողոքարկման իրավունքը՝ որպես հետևանք չապահովելով տուժողի իրավունքի սահմանափակման և հետապնդվող նպատակի միջև արդարացի հավասարակշռությունը:

28. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից չի ապահովվել տուժող «**********» ՍՊ ընկերության արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը:

29. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, պատշաճ ստուգման և գնահատման չենթարկելով նախաքննության մարմնի՝ քրեական վարույթը կարճելու մասին 2025 թվականի հունվարի 17-ի որոշումը, թույլ են տվել քրեադատավարական օրենքի էական՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 23-րդ հոդվածների խախտումներ, որոնք, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն, հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և վարույթը նոր քննության փոխանցելու համար[32]:

[32] Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Հրայր Հովսեփյանի* գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 և *Ավաթ Ամինիի* գործով 2023 թվականի հունվարի 25-ի թիվ ԵԴ/0752/06/22 որոշումները:

Միևնույն ժամանակ ելնելով արձանագրված խախտումների բնույթից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ կենսագործումը կարող է ապահովվել միայն Վճռաբեկ դատարանի կողմից վարույթն Առաջին ատյանի դատարան նոր քննության փոխանցվելու պարագայում: Նոր քննության ընթացքում դատարանը պետք է վերացնի սույն որոշմամբ արձանագրված խախտումը և արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ վարույթի նյութերի պատշաճ գնահատման հիման վրա հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 33-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 362-րդ, 363-րդ, 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի մայիսի 26-ի և ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 10-ի որոշումները բեկանել և վարույթը փոխանցել ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ նոր քննության՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆ

Դատավորներ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

Ս.ՉԻՉՈՅԱՆ

Դ.ՎԵՔԻԼՅԱՆ